«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
Общественная организация “Армянский центр защиты прав человека им. А.Д.Сахарова”
"The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre'' Non governmental organization

ՀՀ, 0009 ԵՐԵՎԱՆ, Սարմենի 1 1 Sarmen St., 0009 YEREVAN, ARMENIA РА, 0009 ЕРЕВАН, ул. Сармена 1
(37410) 54-29-36, 58-78-64, 56-15-05 Fax: (37410) 561505 e-mail: sakhfd@arminco.com , www.sakharovcentre.org

09 Օգոստոսի, 2011թ. **Ե-1935**

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ուսումնասիրելով «ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը /այսուհետ Նախագիծ/, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մեր կազմակերպության դիտողություններն ու առաջարկություններն այդ Նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի վերնագրում «հաշմանդամ» բառի ձևակերպումը «հաշմանդամություն ունեցող անձի» համարում ենք դրական:
2. Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետում ներառել նաև **<u>քաղաքացիություն չունեցող անձանց</u>**, քանի որ ՀՀ սահմանադրությամբ, «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 02.03.2006թ. «ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 318-Ն որոշմամբ քաղաքացիություն չունեցող անձինք կարգավիճակ ունեցող անձինք են: Բացի այդ, ՀՀ սահմանադրությամբ առանձնացված են երեք կարգավիճակ ունեցող սուբյեկտները՝ քաղաքացիներ, օտարերկրացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք: Հետևաբար, այս դույթն անհրաժեշտ է նախևառաջ համապատասխանեցնել ՀՀ սահմանադրությանը:
3. Առաջարկում ենք **հաշմանդամություն ունեցող անձի** սահմանումը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «անձ, ով առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով չի կարող ինքնուրույն իրացնել իր իրավունքներն ու հիմնարար ազատությունները և լիարժեք մասնակցել հասարակական կյանքին»:
4. Առաջարկում ենք **կենսագործունեություն** սահմանմանը տալ դեռևս գործող «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում **կենսագործունեության սահմանափակումներ** բառակապակցության ձևակերպումը, հետևյալ խմբագրությամբ. «անձի ինքնասպասարկման ապահովման ունակության, ինքնուրույն տեղաշարժվելու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու, ուսումնառելու, (երեխաների համար՝ նաեւ խաղալու), աշխատանքային, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, հասարակական, քաղաքական կյանքին մասնակցելու, կարողությունների կամ հնարավորությունների լրիվ կամ մասնակի կորուստ (ներառյալ՝ վերականգնման տեխնիկական միջոցների եւ այլ օժանդակ պարագաների օգտագործմամբ տեղաշարժվելը, տեսնելը, լսելը եւ (կամ) խոսելը)»:
5. Առաջարկում ենք **աշխատունակության սահմանափակում** հասկացությունը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության **լրիվ կամ մասնակի** սահմանափակում»:
6. Նախագծում անհասկանալի են և ամբողջական չեն օրենքում օգտագործվող հասկացությունները. օրինակ՝ **մատչելի միջավայր** ասելով ինչ ենք հասկանում, որն է համարվում մատչելի, ինչպես և ով է որոշում միջավայրի մատչելիության աստիճանը: Գործող «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում որոշակի ձևակերպում կա, միգուցե այն նույն խմբագրությամբ պահպանվի Նախագծում. «**կենսագործունեության միջավայրի մատչելիության ապահովում**՝ հաշմանդամների կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու նպատակով եւ նրանց կարիքները հաշվի առնելով՝ բնակելի եւ հասարակական շենքերի, փողոցների, բժշկական, արտադրական, ուսումնական, մշակութային, մարզական եւ այլ շինությունների Նախագծումը, կառուցումը եւ վերակառուցումը, հասարակական տրանսպորտի միջոցների հարմարեցումը, ինչպես նաև նպաստավոր տեխնիկական պայմանների ապահովումը՝ հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություններն ընդլայնելու նպատակով:
7. Նախագծում դուրս են մնացել հետևյալ հասկացությունների սահմանումները. «**վերականգնման տեխնիկական միջոցներ եւ այլ օժանդակ պարագաներ**՝ կենսագործունեության սահմանափակումների լրիվ կամ մասնակի հաղթահարման, փոխարինման (փոխհատուցման)

համար նախատեսված հատուկ սարքեր եւ տեխնիկական միջոցներ (սայլակներ, քայլակներ, լսողական ապարատներ, օրթեզներ, պրոթեզներ, հենակներ, ձեռնափայտեր, մասնագիտացված համակարգիչներ եւ այլն).

հաշմանդամների սոցիալական պաշտպանություն՝ տնտեսական, սոցիալական եւ իրավական միջոցառումների համակարգ, որը հաշմանդամների համար ապահովում է կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ եւ ուղղված է հասարակական, քաղաքական կյանքում նրանց մասնակցության համար մյուս քաղաքացիներին համարժեք հնարավորությունների ապահովմանը: Առաջարկում ենք սույն կետում նշված հասկացություններն ընդգրկել Նախագծում:

8. Նախագծի 7-րդ հոդ. 2-րդ կետում առաջարկում եմ լրացնել նաև **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:**
9. Նախագծի 7-րդ հոդ.՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգի կառավարումը», տրված է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն իրականացնող հիմնական մարմինների ցանկը, որի մեջ ընդգրկված են տեղական ինքնակառավարման մարմինները: Իսկ Նախագծի 8-րդ հոդ. և 9-րդ հոդ. ամրագրված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում ՀՀ կառավարության և պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները, սակայն Նախագծում առանձնացված չէ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում, մինչդեռ հաշմանդամություն ունեցող անձը բնակվում է որևէ համայնքում և ըստ ՀՀ Սահմանդրության և «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի, տեղական ինքնակառավարումը կրում է սեփական պատասխանատվություն բնակիչների բարեկեցության բարելավման խնդիրներում /ՀՀ սահմանադրության 104-րդ հոդ., «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդ./: Առաջարկում ենք Նախագծում լրացնել հոդված՝ **տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում**, սահմանել նաև, որ **այդ լիազորությունները կարող են լինել նաև պատվիրակված**:
10. Նախագծի 8-րդ հոդվածի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում ՀՀ կառավարության լիազորությունների ցանկում լրացնել նաև **միջավայրի մատչելիության աստիճանի կամ չափանիշների սահմանումը** կամ ձևակերպել հետևյալ խմբագրությամբ «… **սահմանում է մատչելի միջավայր ապահովելու պահանջների չափանիշները և դրանց իրականացման ժամկետները»:**
11. Նախագծի 9-րդ հոդվածում լրացնել, որ պետական կառավարման լիազորված մարմինը համագործակցում է ոչ միայն ոլորտի ՀԿ-ների հետ, այլ նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ:
12. Նախագծի «Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը» 13-րդ հոդ. հստակ չի սահմանվում հաշմանդամության բոլոր խմբերի անձանց կրթության ոլորտում արտոնություններից օգտվելու իրավունքը: Նախագծի 13-րդ հոդ. 5-րդ և 7-րդ կետերում հստակ առանձնացված են 1-ին խմբի և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, գործող «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ գլխով սահմանված հոդվածներն ավելի արտոնություններ են տալիս հաշմանդամություն ունեցող անձանց: Հարկ է նկատել նաև, որ Նախագծի 13-րդ հոդ. 7-րդ կետում սահմանված է, որ «…1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքում չեն ճանաչվել հաշմանդամություն ունեցող անձ»: **Իսկ եթե նրանք ճանաչվել են 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա այս մասին նշում չկա Նախագծում, թե ինչ արտոնություններից է նա օգտվում, կամ օգտվում է, թե՝ ոչ: Առաջարկում ենք նաև, որ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց համար նույնպես որոշակի արտոնություններ սահմանվի օրենքով: Այսպիսով, անհրաժեշտ է հստակեցնել սույն հոդվածի պահանջը:**
13. Նախագծի 14-րդ հոդ. «հաշմանդամներ» բառը համապատասխանեցնել օրենքի Նախագծի վերնագրին և Նախագծում օգտագործվող միևնույն տերմինին՝ «հաշմանդամություն ունեցող անձ»: Այս հոդվածում սահմանելով հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքի և զբաղվածության ապահովման մասին, ցանկալի կլիներ սույն օրենքի հետ միասին Հայաստանում ներդնել **կորպորատիվ սոցիալական պատասխանատվության** ինստիտուտը, նպաստել դրա զարգացմանն ու ամրապնդմանը, այլապես Նախագծի 14-րդ հոդ. սահմանված դրույթի պահանջն անիրատեսական է:
14. Նախագծի 22-րդ հոդ. 1-ին կետի 7-րդ ենթակետի պահանջը կրում է դեկլարատիվ բնույթ, քանզի Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում մինչև օրս չկա բնակարանային ֆոնդ, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններն առավել ևս չունեն առանձնացված անշարժ գույք /բնակ.ֆոնդ/: Այս դրույթի սահմանմամբ օրենսդիրն ու գործադիրը մեծ բեռ և պատասխանատվություն են իրենց վրա վերցնում, ըստ որի չեն կարող լիարժեք ապահովել և կատարել այդ հոդվածի պահանջը: Պետությունն այս ուղղությամբ պետք է լուրջ

Blankfoundation

ուսումնասիրություններ և հետազոտություններ իրականացնի, արդյո՞ք սույն Նախագծի ընդունումից հետո գործադիրը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինն իր թշվառ բյուջեով ու հնարավորություններով ի վիճակի է լինելու լիարժեք ապահովել և իրականացնել սույն Նախագծի 22-րդ հոդ. 7-րդ կետի պահանջը: Կոնկրետ այս կետի պահանջը լուրջ վերանայման կարիք ունի: Հետևաբար, Նախագծում պետք չէ սահմանել այնպիսի դրույթներ, որոնց պահանջների կատարումը հետագայում պետությանը լուրջ խնդիրների առջև է կանգնեցնելու:

Նախևառաջ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ գործող օրենսդրությամբ /ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ կառավարության բնակապահովման ոլորտին վերաբերող մի շարք որոշումներ/ հաշմանդամություն ունեցող անձին բնակարան հատկացնելիս հաշվի չի առնվում նրա հաշմանդամության խումբ ունենալու հանգամանքը: Օրինակ որևէ օրենքում կամ կառավարության որոշմամբ հստակ նախատեսված չէ, որ եթե բնակարան հատկացվում մի ընտանիքի կամ անձի, ով ունի համանդամություն խումբ, ապա պետք է հաշվի առնվի այդ հանգամանքը, այսօր հաշվի է առնվում ընտանիքի անձանց թիվը, 9 տարեկանից բարձր տարասեռ անձանց առկայությունը, փախստականի, սեփականատիրոջ, վարձակալի, զինվորական ծառայողի և այլ հանգամանքները, բայց ոչ միայն հաշմանդամության խումբ ունենալու հանգամանքը: Հետևաբար, առաջարկում ենք վերանայել այս հոդվածի պահանջն ամբողջությամբ և այդ ոլորտին վերաբերող ՀՀ գործող օրենսդրությունը և այն համապատասխանեցնել միմյանց՝ հօգուտ հաշմանդամություն ունեցող անձանց:

15. Նախագծի 29-րդ հոդվածի վերնագիրը վերաձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝ «անձի հաշմանդամության խմբի ճանաչումը»:
16. Նախագծի 32-րդ հոդ. նախատեսված հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կամ նրա լիազորված անձին:
17. Նախագծում սահմանված չէ նաև, թե այլ պետությունների կողմից ճանաչված և ՀՀ-ում մշտապես բնակվող անձանց իրավունքների ու պարտականությունների մասին, ինչպես նաև հստակեցված չէ, արդյո՞ք ՀՀ պետական լիազոր մարմնի կողմից ընդունվում է նրանց այլ պետության կողմից հաշմանդամության խումբ ունենալու մասին փաստաթուղթը, արդյո՞ք սույն օրենքի պահանջները տարածվում են նրանց նկատմամբ ևս, թե՝ ոչ, եթե ոչ, ապա Նախագծում պետք է նախատեսել առանձին հոդված, որ նրանց կարգավիճակի կամ հաշմանդամության խումբ ձեռք բերելու և հաշմանդամության խումբը հաստատելու կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ:
18. Նախագծում անպայման ներառել հետևյալ դրույթը. «Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների կողմից հիմնած հեռուստառադիոընկերությունները սույն օրենքով սահմանված եթերաժամանակով պետք է ապահովեն մանկական եւ լրատվական հեռուստահաղորդումների սուրդոթարգմանությամբ հեռարձակումը:»:
19. Առաջարկում ենք նաև Նախագծում նախատեսել դրույթ, համաձայն որի **հարկային արտոնություններ կտրամադրվեն միայնակ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, մասնավորապես գույքահարկի, հողի հարկի, վճարովի ծառայություններ մատուցող կազմակերպություններում իրենց օրենքով նախատեսված պարտականություններն իրականացնելիս /օրինակ՝ նոտարական ծառայություն, կադաստր, համատիրություն և այլն**/:
20. Միևնույն ժամանակ, առաջարկում ենք սույն Նախագծում պահպանել ներկայումս գործող «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 4, 5, 5.1, 5.2, 7.1, 8, 9, 9.1, 9.2, 10, 11, 11.1, 12 - 32, 34 - 37, 39, 41 – 44 հոդվածներով նախատեսված երաշխիքները /պահանջները/ և իհարկե խիստ պահպանելով 19.12.2001թ. ընդունված և ՀՀ կողմից վավերացված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջները:

Սույն նախագիծը մեզ է տրամադրվել 21.04.2011թ. Երևան քաղաքի Կոնգրես հյուրանոցում Նախարարության կողմից կազմակերպված քննարկման ժամանակ:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՏՆՕՐԵՆ

Blankfoundation